ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ– 60, *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, 176 էջ:*

2016-ի օգոստոսի 11-ին լրացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանի ծննդյան 60-ամյա հոբելյանը: Այդ կապակցությամբ «արվեստագիտության բնագավառում ձեռք բերած ակնառու նվաճումների և ՀՀ ԳԱԱ համակարգում երկարատև ու անբասիր աշխատանքի համար» հոբելյարը պարգևատրվեց ՀՀ ԳԱԱ Վաստակագրով, իսկ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց «Արարատ Աղասյան – 60» ժողովածուն, որի պատասխանատու խմբագիրն է փ. գ. դ. Գրիգոր Ասատրյանը: Գիրքը բաղկացած է երկու բաժնից: Առաջին բաժինը ներառում է արվեստաբանի հարուստ կենսամատենագիտությունը: ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը *և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր* Աննա Ասատրյանն *«Արարատ Աղասյան. վաստակաշատ արվեստաբանն ու գիտության հմուտ կազմակերպիչը» առաջաբանում ներկայացրել են հոբելյարի կենսագրությունը, ուրվագծել և համակողմանի լուսաբանել նրա՝ գիտական, գիտակազմակերպական, մանկավարժական ու հասարակական բազմամյա արգասավոր գործունեությունը: Կենսամատենագիտությունը, որը կազմել են Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատողներ, արվեստագիտության թեկնածուներ* Մերի Կիրակոսյանը *և* Մանե Մկրտչյանը, *ընդգրկում է Ա. Աղասյանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը, արվեստաբանի՝ Հայաստանում ու արտերկրում լույս տեսած շուրջ 200 տպագիր աշխատությունների ցանկը (գրքեր և պատկերագրքեր, գրքույկներ, սեղմագրեր, կատալոգներ, բուկլետներ, ամսագրերում, ժողովածուներում և հանրագիտարաններում*



տպագրված հոդվածներ, գիտական զեկուցումներ, ինչպես նաև թերթային հոդվածներ, հարցազրույցներ ու թարգմանություններ) և նրա խմբագրությամբ հրատարակված աշխատությունները: Ներկայացված են նաև Ա. Աղասյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանված դիսերտանտների ցուցակը և գիտնականի ու նրա աշխատությունների մասին ստվար գրականությունը:

Երկրորդ՝ «Արարատ Աղասյանը՝ հայ կերպարվեստի հետազոտող», բաժինը ներառում է գիտնականի՝ հայ արվեստաբանության մեջ ներդրած ավանդը լուսաբանող հոդվածները, որոնց հեղինակները Ա. Աղասյանի նախկին ասպիրանտներն ու հայցորդներն են, ովքեր «այսօր արդեն արվեստագիտության թեկնածուներ են և շարունակում են իրենց գիտական գործունեությունը հարազատ ինստիտուտում կամ էլ զբաղված են գիտամանկավարժական աշխատանքով Հայաստանի բուհերում՝ պահպանելով սերտ կապն Արվեստի ինստիտուտի հետ» (էջ 73): Մեր իրականության մեջ, կարծում եմ, աննախադեպ այս ձեռնարկում գիտական դպրոցի հիմնադիր Ա. Աղասյանի սաները քննության են առել արվեստաբանի՝ արևմտահայ, խորհրդահայ և սփյուռքահայ արվեստին առնչվող գիտական բազմաբնույթ ուսումնասիրությունները, բացահայտել նրա ներդրումը հայ արվեստագիտական մտքի զարգացման մեջ, ըստ պատշաճի գնահատել դրանց գիտական արժեքը՝ զուգահեռաբար անդրադառնալով արվեստաբանի գիտական ըմբռնումներին, գիտահետազոտական մեթոդներին ու գիտական բարեխղճությանը:

Ա. Աղասյանի՝ հայ մեծանուն արվեստագետ Վարդգես Սուրենյանցի ստեղծագործության ուսումնասիրություններին և դրանց արժևորմանն է նվիրված Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Սաթենիկ Մելիքյանի *հոդվածը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, Երիտասարդ արվեստաբանների խորհրդի նախագահ, արվեստագիտության թեկնածու* Մերի Կիրակոսյանը *լուսաբանել է արվեստաբանի վաստակն արևմտահայ կերպարվեստի ուսումնասիրության գործում: ՀՀ - ԳԱԱ արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու* Մանե Մկրտչյանը *ներկայացրել է Ա. Աղասյանի ներդրումը հայ կերպարվեստի տիտան Մարտիրոս Սարյանի վաղ շրջանի արվեստի ուսումնասիրության գործում: Ա. Աղասյանի ղեկավարությամբ պաշտպանած առաջին ասպի-*

րանտ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Արթուր Ավագյանն *անդրադարձել է գիտնականի՝ ավելի քան երեք տասնամյակ ընդգրկող գիտական գործունեության ընթացքում խորհրդահայ արվեստի խնդիրների համակողմանի և բազմաբնույթ ուսումնասիրություններին: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական քարտուղար, արվեստագիտության թեկնածու* Մարգարիտա Քամալյանի *հոդվածը՝ նվիրված է հայ Սփյուռքի արվեստին առնչվող Ա. Աղասյանի բեղուն գիտաստեղծագործական գործունեությանը: Երևանի պետական համալսարանի դասախոս, արվեստագիտության թեկնածու* Հռիփսիմե Վարդանյանն *անդրադարձել է արվեստաբանի աշխարհընկալմանն ու մտածելակերպին, գիտական նախասիրություններին և մեթոդին՝ իր մտքերը հիմնավորելով արվեստաբանի գիտական ուսումնասիրություններից քաղված օրինակներով: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող* Մարտին Հարությունյանը *հեղինակային խմբում միակն է, ում ատենախոսության գիտական ղեկավարն Ա. Աղասյանը չէր: Առանձնանում է նաև նրա հոդվածը, որն անդրադարձ է անվանի արվեստագետի թարգմանչական աշխատանքներին: Ուշագրավ է, որ Ա. Աղասյանի «Ռուսական պոեզիայի գանձարանից. բանաստեղծություններ» վերտառությամբ ժողովածուի ձևավորումը ժամանակին կատարել է հենց հոդվածագիրը:*

Ինչպես նկատել է Մ. Մկրտչյանը, «Արարատ Աղասյանի 60-ամյակի առթիվ հրատարակվող հոդվածների այս ժողովածուն թեև գիտական հիմք ունի, կարծում եմ, այնուամենայնիվ, թույլ է տալիս հեղինակներին փոքր-ինչ ազատ գտնվել և գիտական վերլուծությունից բացի նաև սրտի խոսքն ասել» (էջ 120): Իրենց հոդվածներում զուտ գիտական մասից բացի արվեստաբանի սաները ջերմորեն շնորհավորել և անկեղծ ակնածանքն ու համակրանքն են արտահայտել գիտական ղեկավարի մասնագիտական և մարդկային արժանիքների հանդեպ՝ հիշատակելով Ա. Աղասյանի ավանդը իրենց մասնագիտական աճի և կայացման մեջ:

Այսպիսով՝ նշենք, որ «Արարատ Աղասյան – 60» հոբելյանական ժողովածուի լույսընծայումը արժևորվեց նրանով, որ արվեստաբաններին, մշակույթի պատմաբաններին, հայագետներին և ընթերցող լայն շրջաններին հնարավորություն ընձեռեց ի մոտս ծանոթանալու Ա. Աղասյանի գիտական, գիտակազմակերպչական և մանկավարժական բեղմնավոր աշխատանքին, հայագիտության մեջ ներդրած լուրջ ավանդին:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼՅԱՆ